



ԱՆԻԱ ԴԱՎԹՅԱՆ

Հեղափոխություն

- Ուղանդն եկավ թե՝ բարեւ ձեզ: Սադ գեղին էլի իրանով էր արել, որին խաշլամա, որին երկու լավաշի փող, մնացել էի ես:
- Ախր, Վարդգես ջան, տեսնո՞ւմ ես, ինչի՞ գնացիք էլի իրան ընտրեցիք, Նիկոլն ի՞նչ անի էս դեպքում:
- Ուազ, գյուղի որոշածն էր, Ուղանդին էս գյուղն էլ է շատ: Իսկը իրար հարմար են: Եկավ իմ մոտ, ասի՞ սաղին որ հարմար է, ախաղեր, զնա, ես քու դեմն առնողը չեմ: Գնա, դառի:
- Ախր հիմա փոխավել ա, կյանքն անհատական ա, Վարդգես ջան:
- Ուազ, ի՞նչ անհատական, մարդ ո՞ւր ա, որ... Ֆոռբի հարսին շունը զգել էր: Վարդգենենեն՝ ս, բոռալով եկան՝ թե հասի: Ասի՞ Ավ ջան, զինվի: Բահն առանք, զնացինք, որ ի՞նչ: Շունը խոզի գոճիներին կերել, հետո հասել էր հարսի վրա: Գգել, քցել էր դուան շեմին: Հիմի էլ պերեվազկի եմ տանում Արթիկ, բերում:
- Ուազ ախաղեր, իլը արի մեր մայլեն, մարդ չկա, գյուղապետին պտի դիմենք, որ ուրիշ մայլից մարդ դրգե:
- Հրաշ ջան, ախր էղքան գնում են երկրից, ի՞նչ կա էդ դրսերում: Դրսի կյանքն էլ իրա բարդություններն ունի:

- Ռազ, դու Երեւան, մենք՝ ստեղ: Դու խաբար չես: Զմեռն առավոտները ընդամենը հինգ պաշկա հաց էի տանում Արթիկի սուավերմարկետ, որ ծախսվի: Տասը րոպե ուշացնեի, ել չեր վերցնի: Իսկ ավտոյի ակերը՝ քյաշալ, դուրսը՝ գալայոդ: Ել տոռս եմ քաշել ակերին, ել քյանդր, ել քեչա, մխերով-քանով, ելի չեր քշվի եղ սառույցին: Օֆելյային ասում էի՝ աղջի դու մի արի, մի քան լինի, զոնե դու մնաս երեխսերի զլխին:
- Սպեց ժնշիլը քանի՞ս է, Վարդգես ջան, մի հատ առնեիր, զցեիր տակը:
- Ռազ, ես գրտնակը տաշելուց, աշքերս բռնվել էր, տունը հազար դրամ չկար, որ երեխսն իշներ, դերսամետազոն բերեր: Հրաշենց տունը ժամկետն անցածմ կար, դրա հետեւից դրգեցի, եղ էի կաթացնում:
- Ռազ ախավեր, ստեղ ով ապրի, կարա ջունգլիներում էլ ապրի, անապատում էլ, սիրիր էլ:
- Այ ախավեր ջան, մեր հոր տունն էս է:
- Դե դու արի, ապրի: Ես զամ Երեւան, դու Դավոյի հետ արի զյուղ: Արեք ձեր հոր տունը պահեք:
- Ախավեր, բա ի՞նչ անենք, դուռը փակենք, զնա՞նք:
- Ինչի՞ չգնանք, որ մուխը շմարի՞: Սկի մուխ էլ չկա տների վրա:
- Աշակերտներիցս մեկը գրել էր՝ ես մի կախարդ տեսա, որ իմ ներսի քանտում էր:
- Բա եկեղեցի՞ն: Տորիստներ չի բերո՞ւմ:
- Եկեղեցին ի՞նչ: Խալիները փոել են, տերտերները վրայով գնում-զալիս են: Ել են եկեղեցին չե: Կուսակրոն Տեր Հունանն էլ ինչ Ննշիկի հետ երեխա ունեցավ, գեղացիք դրին, մորուքը կտրեցին, հիմա եկեղեցուց ելել, դպրոցում աշխարհագրության դասատու է աշխատում:

- Ես ձեր տեղը լինեի, մի իրեք հարուր հատ նապաստակ, հորթուկ, ոչխար, հավ կպահեի, ֆերմա կղնեի: Գոմը կա, բանը կա:
- Ուազ, հավն առնում ես, հավկիթը ոռեն կշռոա, հասցրիր ստեղ, կդառնա կուոկուո, վերջ, Էլ չի ածե:
- Պարեց Սասունն, ու ողջ աշխարհը հիացավ,

Պարեց Սասունն, ու ողջ աշխարհը հասկացավ,

Որ պար չէ սա, այլ մի երկրի հին պատմություն…

- Ավո, գնա կուխնին սորվի:
- Հանդեսի եմ, պա:
- Ես չոլի մեջ ի՞նչ հանդես:
- Նահապետավանի հետ հանդեսի մրցում է:
- Վարդես ջան, Կոնդը հավ չի՞ պահե:
- Օֆելյա, Կոնդի իսկական անունն ի՞նչ էր:
- Հոկուլը լավ գիտեր, Ան, չեմ հիշում:
- Կոնդը լավ հավ մորթող է, կանչեցի, մորթեց, պրծանք: Վրեքը պժեղմ միս չկար:
- Ուազ ախապեր, Վանյից լավ մալ պահող չեղնի: Ենքան էր սիրում, մալի հետ գուն էր քնում, կոտոշները շուշարդում էր: Ինչ եղավ վերջում. մնացել էր թրիքը, եղ էլ ծախեց, գնաց Երեւան:
- Հոկուլը Վանյին միշտ Վազգեն էր ասում:
- Հա, Վազգենը: Գոմի հոտի վրա՝ վարդի յուղ:

- Վձն էքսպերտ էր, դաժեւ Վձն չկարացավ մալ պահե: Գալիս էր, խոտ էինք ծախում, նայում էր գույնին, տեսքին, դնում էր բերանը, ծամում էր, ասում էր՝ չնեղանաք, լավ խոտ չէ: Այ էղ Վձն անհետ կորավ զյուղից:
- Թիփին որ ութ ամիս վոռա... Վերեն նենց կիշնի, կասես՝ տունս տարավ: Սարը քամով կիշնի...
- Հրաշ ջան, Աշոտը ո՞նց արեց: Ճո չեմ ասում՝ դուք պահեք: Դուք ստեղծեք, աշխատատեղեր քացեք, դուք դեկավարեք:
- Նախ Աշոտինը այզի է, մալ չէ: Ճետո տաք է Արզնի, Շիրակը չէ: Ուազ, դու քո ձեռքով պտի անես, թե չէ վարի կտան: Դուքիկեն չդրի՞նք: Մուխաննաք Մակիշն եկավ, թեւը կոխեց մեջը, լդեց: Միլիցեքի դուռն հասանք: Աշոտ որ ասում ես, Աշոտի հեր Ուռերտոր խնձոր քաղողներին ասում էր՝ խնձորն առանց պտտելու քաղեցիր, Էլ մյուս տարի չի աճի: Միսալ ես քաղում, Էլ գործի չզաս, տգես: Մանկապարտեզի վարիչ էր վախտին:
- Ուազ ախավեր, ասում ես՝ ոչխար: Ոչխարը Ճոկտեմքերյանի փուշը կուտե, բայց հասավ մեր մոտ, գետին է, ի՞նչ ուտե: Տիզ կընկնի, կսատկի:
- Ուազ հոպար, հլը ֆոա ու նայի էղ սարին:
- Ընի ջան, էղ սարն է կերակրողը:
- Ուազ, ստեղ անոմալիա է, կլիմա չէ: Ստեղ ամենադիշովի կյանքի համար վճարում ես ամենաթանկ գինը:
- Ինչքա՞ն կվառեք ձմեռը, Վարդգես ջան:
- Յոթանասուն հազարի: Սադ ամառ հավաքում եմ, որ ձմեռը զազի փող տամ: Եռաֆազի համար Էլ դիմում գրեցի, նախարարությունից թուղթն եկավ: Ամբողջ էջին գրած էր իմ անունը, վերջում՝ Հարությունյան Արտակ: Ես ձեր տիրու նանը: Էլի առա, իշա Արթիկ: Զիմա սադ ինստանցիաներով նորից հետ են ուղարկել, որ անունը փոխեն: Ընդամենը մի թղթի համար ութ անգամ Արթիկ իշի, ել:

- Հոպար, ասում եմ՝ ձմեռվա վառելիքի փողով Երեւանում սեփական տուն կվարձես, հացի արտադրությունդ ու գործիքներդ կտեղափոխես, կաշխատես, ավելի լավ կլնի:
- Ընի ջան, սպասեմ: Տոյատիից գրտնակ են պատվիրել: Մկայառվ զանգեց: Տեսել եր լիստով, շշմել եր, հիմա ամբողջ հոսքագիծն է ուզում՝ խմորը կտրող, զնդող, գրտնակող լինյա:
- Որտե՞ղ ես եղ սովորել, ո՞նց ես հավաքում եղ գրտնակը:
- Տո, այ Ընի ջան, ինձուինձ բեջարում եմ: Ինչքան իին երկաք կար, տաշեցի, սարքեցի: Բայց մաս չի ճարվում: Ցեպը Երեւան վեց հարյուր դրամ է, հասնում է ստեղ, դառնում է երկու հազար: Ել վալ, Ել շկիվ, կառդան, ոեղուկտոր ժիգուլու ոեղուկտո է, ոեզրավոյ վինտ, մատոր, ոեսեն, սաղ մասերի համար կողքի գյուղերով ֆոռում եմ, որ ճարեմ: Մինչեւ մասերը հավաքում եմ, պատվիրատուն հոգնում է սպասելուց:
- Ե՛, ախապեր ջան, տենց քիզնես կլնի՞:
- Ի՞նչ անեմ, Ռազ, եղ է ունեցածս: Չեմ կարա տամ-առնեմ: Երեկ սվառկա արեցի, Ել բոլտը մեջը չեր հազնում: Ութի բոլտը իննով կծակվի, եղ մեկ միլիմետրը մինչեւ վերջ կձգվի, Ել եղ բոլտին նա խոյ ձեռք չպահ տաս: Սվառկից հետո տեղահան եղավ: Սաղ դրի քանդի, պոչը ջարդավ, ոնց որ կովը սատկավ: Կվալդով տվի, սաղ ջարդի: Դու մի ասա՝ Սյուզիս դուրսը նստած լսում ե՛ ոնց ես քֆրտում:
- Բա, Վարդգես ջան, լյուբոյ մետաղ լարման մեջ է սվառկի ժամանակ: Տոչկերով պետք ա բռնես:
- Գիտեմ, Ռազ, գիտեմ: Են Ե՛ շրաշն Ել խլուրդի սարքն է խոդի տվել:
- Հա՛, Ռազ ախապեր, խլուրդին՝ որպես դասակարգ վերացրել եմ: Դավոս եկավ, տեսավ, շշմավ:
- Հոպար, ձեւ չկա՞ չսատկացնելու, ուղղակի քշելու բոստանից:

- Չե, Ընի ջան, Էլի հետ կզա:
- Ես երկիրը պետք ա ընդեղ հասած լիներ, որ քեզ տուգանեին կենդանիներ վերացնելու համար:
- Երկիրը բող զա, խլուրդը արտիցս հանե: Ընի ջան, կանգնած ես, չէ՞, մեկ Էլ կնայես՝ զազարի պոշը գըրընաց, տարավ գետնի տակ: Հերթով կտանի:
Գազարը, սխտորը, կարտոլը: Ես կոշկոռեքի մեջ յանի քան կաճի, Էն Էլ խլուրդը կտանի: Աղեղը սարքել եմ, լարած դնում եմ քնի բերանին, հենց բարձրանում է, կպնում է լարին, շըխկ, գլուխը ջնջխում է:
- Մի պատմի:
- Առաջ ծակի մեջ շլանգով ջուր էինք կապում, ելնում էր քոռ-քոռ, ընկնում էր արտի երեսը: Դավոս բահով էնքան էր տալիս, մինչեւ արնոտ քրդի պես մնում էր արտի երեսին:
- Բա, Ընի ջան, հոպարներդ հողերը կճանկուտեն ապրելու համար: Ի՞նչ անեմ, ես երեք երեխա ունեմ թաղին հանելու:
- Իմացե՞լ ես Ավոյիս բիզնեսը: Ալի Էքսպրեսով ճանա քոնող ծաղիկի սերմեր է պատվիրել: Ավո, հլը քեր: Տո, Ընի ջան, եկել են սերմերը, հահահա: Բերել-տնկել է, աճել են: Ծաղիկը կաճի, բերանը փշերով կբանա, ճանճը կմտնի մեջը, հոպ, կլուց: Ավո, հլը քեր:
- Ես ինչ մանր են: Բայց ձեր կլիմային կդիմանա՞ն:
- Նայենք, մենք Ռոբիզոնն ենք՝ պոռստը ցուրտ տեղ, բամբուկ չկա, այծ չկա, չուտել այծի միս, վաբշե չուտել միս:
- Ընի ջան, ջուր բերե՞մ, խմես:
- Վայ, հոպար ջան, ուրեմն դո՞ւ պետք ա ինձ ջուր բերես:
- Գիտե՞ս Աղվանը զանգել ինչ էր ասում:

– Ի՞նչ:

- Ասում էր՝ Վարդգես ջան, երեխսեքս աբխազերեն ոտանավորներ են արտասանում, իս է մեր կյանքը, բայց գալ չեմ կարա, գամ էդ սարի գլխին, ինչո՞վ ապրեմ: Հլը նայե, հլը նայե սարին: Նայե լուսամուտից ոնց վրա կըշե:
- Մի վերմակ, իրեք աղեալ, Ընի ջան, բայց մեկ է՝ Էնքան ցուրտ է, չես քնի:
- Երկու ամիս ամառ ու վերջ: Օգոստոսի վերջ ձունը կդնե, մի խնդա, ու ճկճկան մառող՝ ութ ամիս: Լեղակողները սեւեռ ո՞նց կերթան, այ տենց է մեր կյանքը:
- Մի բան պետք ա մտածվի, ախապերներ ջան:
- Ուազ, չենք կարա ոռներս ճղենք, դազի հավկիթ ածենք: Էս է: Լավաշ ծախելով օրական երկու կոպեկ: Ու մի քանի ամիսը մեկ էլեկտրական գրտնակ ծախել: Էս վերջին մողելից, որ սարքել եմ, մի հատ Սառնաղբյուրում կա: Գնանք, տես: Լիստով դրել եմ:
- Մենակ ցուրտը չէ, հոգեբանությունդ…
- Ստեղ հանուն չկա…
- Ստեղ նավթ գտնելն է ելքը:
- Օֆելյա, իմացա՞ր աղվեսը Մարինի շորս հավը տարել է:
- Որձ հորթիկ է պետք, Վարդգես ջան, որձ հորթիկ:
- Սխալ է էս տեղը երկրի վրա, ինչ-որ սխալ կա, չգիտեմ: Մենց տեղ չէր կարա գոյություն ունենար: Աշակերտդ ոնց էր ասո՞ւմ՝ կախարդական մի բա՞ն:
- Ես մի կախարդ տեսա…
- Տարիքներդ հաշվի առեք, առողջություններդ հաշվի առեք:
- Կախարդ տեսա…

– Օֆելյա, կոֆեն ելավ:

– Վա՞յ: